

# ՆԱՅԵՐՆ ԱՅՍՕՐ



ՀՀ ՍՓՅՈՒՌԵԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

## Խմբագրական

Մանկա Պետերբուրգում քննարկուել են հայութեանը լուրջ կարեւորագոյն խնդիրներ

Հայ կինը՝ գենի պահապան

## Մփյիւրքի թղթակիցներ

Գլենդեյջի տասնամեայ Այբերտ Բայեանը՝ Հերիաթների աշխարհում մանկական եկարի համահայկական մրցոյթ-փառատօնի յարթող

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉ-ՈՒՅԻՆԵՐԻ ՄԵՏԱՐՈՒՄ

Կոչ Թրիյիսաբնակ իմ հայրենակիցներին

Յարութ Մասունեան. Ձեմալ փաշայի թոռն ասաց Յեղասպանութիւն. իսկ Մորգենթաուի ծոռը՝ ոչ

ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՊԱՒԱՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՆԱԽԱԴԻՊ Է ԹՈՒՐԿԻԱՅՈՒՄ 1915-1923 թթ. ՀԱՅԵՐԻ ԶԱՆԳՈՒՄՍՅԱՆ ԿՈՏՈՐԱՍԵՐԸ ՈՐՊԵՍ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ՈՐԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

## Վերաստպութիւն

ՓՐԿԵԼ ԱՐԵՒՍՏԱՀԱՅԵՐԷԼԸ՝ ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՄԲ

## Իմ քաղաքական



### Մանկու Պետերբուրգում քննարկուել են հայությանը յուզող կարևորագույն խնդիրներ

2011-04-09

Հաւաքի աշխատանքները մեկնարկեցին Մանկու-պետերբուրգի Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևոր առաջնորդ հայր սուրբ Նշան Մարտիրոսեանի օրհնութեամբ եւ համայնքների ղեկավարների ներկայացուցիչների լայն մասնակցութեամբ: Սփյուռքի նախարարութեան պատուիրակութիւնը հանգամանօրէն ներկայացրեց հայ համայնքների ձեւաւորման, աշխարհագրութեան, սփիւռքեան կառոյցների հետ համագործակցութեան անցեալը եւ ներկան: Հաւաքի մասնակիցները տեղեկացուեցին նաեւ ՀՀ սփիւռքի նախարարութեան ստեղծմանը, երկամեայ գործունէութեանը, գերակայ ուղղութիւններին, իրականացած եւ առաջիկայ ծրագրերին, Հայրենիք-սփիւռք գործակցութեանը, համահայկական ծրագրերի իրականացմանը եւ ձեռքբերումներին առնչուող բազում

հիմնախնդիրներին: Ներկայացուցեցին նաեւ ԱՊՀ հայ համայնքների առանձնայատկութիւնները եւ դրանից բխող թիրախային միջոցառումների ծրագիրը, որի իրականացումը մեծապէս կը նպաստի ԱՊՀ երկրներում հայ համայնքների հետ կատարուող աշխատանքների համակարգմանը եւ դրանց արդիւնաւէտութեան բարձրացմանը:

“Համայնքների ներկայացուցիչները հաւաքի ընթացքում բարձրացրին լուծում պահանջող բազմաթիւ խնդիրներ, մասնաւորապէս՝ ուսումնական գրականութիւն, հայագիտական ուսումնասիրութիւններ եւ այլ ձեռնարկներ ստանալու վերաբերեալ: Նշեցին նաեւ սփիւռքի համար հասանելի տիրոջում հետաքննարկուող հեռուստահաղորդաշարերի հայապահպանութեանը չնպաստող բովանդակութեան ու որակի հետ կապուած խնդիրներ: Ընդգծեցին բնակչութեան երկրում այլ ազգային փոքրամասնութիւնների հետ համագործակցութեան եւ նրանց հայկական համայնքի կողմից կազմակերպուած միջոցառումներին մասնակից դարձնելու կարևորութիւնը, ինչպէս նաեւ կիրակնօրեայ դպրոցների գործունէութեան ամրապնդումը, քանի որ հայերէնը հետզհետէ դադարում է լինել հաղորդակցութեան միջոց”,-տեղեկացրեց ՀՀ սփիւռքի նախարարութեան ԱՊՀ երկրների վարչութեան պետ Անդրանիկ Արշակեանը:

Նրա խօսքով, հաւաքի մասնակիցները յատուկ ուշադրութիւն են հրաւիրել նաեւ ՀՀ զինուած ուժերում ծառայութեան հետ կապուած սփիւռքահայ գորակցային տարիքի երիտասարդների զինապարտութեան, տարեկէտման, այլընտրանքային ծառայութեան, ծառայութիւնից ազատման հետ կապուած հարցերի, ինչպէս նաեւ Հայրենադարձութեան մասին օրէնքի նախագծի եւ հայեցակարգի դրոյթների յստակեցման, սփիւռքահայ գործարարների կողմից Հայաստանում ներդրումների դէպքում առաջացող խոչընդոտների յաղթահարման վրայ:

Առաւել շեշտուել է հայապահպանութեան հարցում Հայ Առաքելական եկեղեցու՝ ամենաակտիւ եւ արդիւնաւէտ գործող օղակի դերակատարութեան առաւել ընդլայնման ու խորացման կարևորութիւնը եւ մատնանշուել փոքրաթիւ համայնքներում հայկական եկեղեցու բացակայութեան պարագայում փոքր մատուների կառուցման անհրաժեշտութիւնը:

“Պակաս անհանգստացնող չէ նաեւ Հայաստան - ԱՊՀ երկրներ - եւ յետադարձ ուղղութիւններով ալիստոմների անբացատրելի թանկ գների հարցը, որ կրկին ներկայացրեցին սփիւռքի մեր հայրենակիցները, շեշտելով, որ հակառակ պարագայում հայրենիքի հետ կապը շատերի համար ուղղակիօրէն դառնում է անհնար :Նոյնքան կարեւոր համարուեց նաեւ Հայաստանում ՌԴ միգրացիոն ծառայութիւնների գործունէութեանը հետեւելը, քանի որ ՀՀ հարիւրաւոր քաղաքացիներ մշտական բնակչութեան են մեկնում Ռուսաստան, սակայն որոշ ժամանակ անց յուսալիարուած ստիպուած են լինում վերադառնալ Հայաստան, ուր վաճառել են բնակարանն ու ունեցումաձեռք”,-փաստեց Անդրանիկ Արշակեանը:

Նա նաեւ վստահեցրեց, որ բարձրացուած բոլոր հարցերը լրջագոյնս քննարկուել են. “եղան կառուցողական բազմաթիւ առաջարկներ եւ տրուեցին սպառիչ պատասխաններ ու պարզաբանումներ, եղան նաեւ լրացուցիչ ուսումնասիրութիւններ պահանջող հարցեր: Հանդիպման վերջում համայնքների ղեկավարներին եւ համայնքային կառոյցների ներկայացուցիչներին մեր կողմից նուիրած հայագիտական գրականութիւնը, մեր Մեծերի մասին նիւթերը, խոսասփիկները, այլումները եւ խորհրդանիշների փաթեթը ընդունուեց անթաքոյց գոհունակութեամբ եւ շնորհակալութեամբ: Բացի այդ հանդիպման մասնակիցները գոհունակութեամբ ընդգծեցին հաւաք-հանդիպման կազմակերպական բարձր մակարդակի աշխատանքների արդիւնաւէտութիւնը”:



### Հայ կինը՝ գենի պահապան

2011-04-08

«հայ կնոջ ֆէնոմենը դեռեւս լիակատար ուսումնասիրուած չէ, մինչդէռ հայ կինը հայոց գենի պահապանն է: Իսկ հայութեան մեծ մասն ապրում է անեզր սփիւռքում, ինչը վտանգում է հայ գենը, մշակոյթն ու հայոց լեզուն: Եւ գլոբալիզացիայի ուղին բռնած աշխարհում հայ կնոջ դերն առաւել կարեւորում է որպէս կամուրջ իրենց երեխաների եւ Հայաստանի միջեւ: Երիտասարդներին հայ պահելը հայ կնոջ ձեռքում է: Դրա համար էլ կարեւոր է նաեւ համախմբել սփիւռքեան կանանց հասարակական կ'ազմակերպութիւնները,- ասաց ՀՀ սփիւռքի նախարար Հրանտշ Յակոբեանը՝ ողջունելով եւ շնորհաւորելով ներկայ կանանց:

Այնուհետ ներկայացուցին «հայրենադարձութիւնը եւ հայ կ'ինը», «կ'ինը աւանդական եւ արդի հասարակութեան մէջ Հայաստանում եւ Սփիւռքում է թեմաներով գեկոյցները:

Պատմական գիտութիւնների թեկնածու Արմէնուհի Ստեփանեանը, ներկայացնելով հայ կնոջ ընդգծուած արդիւնաւէտ գործունէութիւնը Մեծ հայրենադարձութեան տարիներին, նշեց պատմութիւնից դասեր քաղելու եւ մեր օրերում առկայ խնդիրների լուծումները գտնելու կարևորութիւնը:

«հայ կինն առաջնային կարևորութեան խնդիր է համարում ոչ թէ սեփական անձն ու աճը, այլ ողջ ընտանիքի առողջ առաջընթացն ու հայեցի դաստիարակութիւնը: Չնայած դրան, հայ կինը կարողանում է կարեւոր դերակատարութիւն ստանձնել հասարակական կ'եանքում,- իր զեկոյցում մատնանշեց պատմական գիտութիւնների թեկնածու Սոււտլանայ Պողոսեանը:

Մերօրեայ խնդիրներից քննարկման ընթացքում առանձնացուեց խառն ամուսնութիւնների աճի միտումը, ինչի առնչութեամբ ՀԲԸՄ երիտասարդական ծրագրերի պատասխանատու Հերմինէ Դիմեանը պատմեց սեփական փորձի մասին. «որպէս սփիւռքում ապրող հայ ընտանիքի մայր՝ մշտապէս գիտեցել եմ հայեցի դաստիարակութեան կարևորութիւնը եւ փորձել եմ մշտապէս հետեւել զաւակներին հայերէն

խօսքին, հայեցի մտածողությանն ու տեղեկությունը Հայաստանի մասին: Չնայած դրան, տղաս գերմանուհու հետ ընտանիք կազմեց, բայց իր գաւակին՝ թոռանս, կոչեց Մինասէ:

«խառն ամուսնություններն անգամ այնպիսի ամուր համայնքներում, ինչպիսիք Լիբանանի եւ Սիրիայի հայ համայնքներն են, դարձել են լուծում պահանջող խնդիր, քանի որ դրանց աճի միտում է նկատուում: Յարաբերություններն ազգերի միջեւ շատ անելի սերտ են դարձել, եւ, բացի դա, կայ եւս մի պատճառ. հայ աղջիկները մտավախություն ունեն տղաների քիչ լինելու պատճառով միայնակ մնալու եւ չեն կարերտրուս իրենց ընտրելի ազգային պատկանելությունը,- բարձրաձայնեց պատմաբան Գեորգ Եազրճեանը:

Կոյր սեղան-քննարկմանը ներկայ էին նաեւ ԵՊՀ սփիւռքագիտության ամբիոնի վարիչ Բուրայ Աւետիսեանը, ՀՀ ազգային արխիւի տնօրէն Ամատունի Վիրաբեանը, ՀՀ ազգային արխիւի փոխտնօրէն Էդգար Յովհաննիսեանը, ԳԱԱ Պատմության ինստիտուտից՝ պ.գ.դ. Էդուարդ Մելքոնեանը, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան պ.գ.դ., Էդիկ Մինասեանը, ՀՀ սփիւռքի նախարարության համահայկական ծրագրերի վարչության գիտակրթական ծրագրերի բաժնի պետ Սիրվարդ Համբարեանը, Համազգային հայ կրթական, մշակութային միութեան Հայաստանի մասնաճիւղի տնօրէն Լիլիթ Գալստեանը եւ այլք:

## Սփիւռքի թղթակիցներ



### Գլենդելի տասնամեայ Ալբերտ Բայեանը՝ Հեքիաթների աշխարհում՝ մանկական նկարի համահայկական մրցոյթ-փառատօնի յաղթող

2011-04-09

Մրցոյթին Աթանեան արուեստի կենտրոնի սաները մօտեցան լրջօրէն եւ մեծ աշխատանք կատարեցին իրենց նկարած հեքիաթների ձեւաւորման իւրովի եւ ինքնատիպ լուծումներ գտնելու համար: Ալբերտի՝ Մի կաթիլ մեղրը՝ դրանցից լաւագոյնների մէջ էր: Մրցոյթ-փառատօնի երկրորդ փուլի աւարտից յետոյ պարզ դարձաւ, որ Աթանեան արուեստի կենտրոնի սաներ Մոնիկայ Համբարձումեանի եւ Դաւիթ Պիրիջանեանի նկարներն արժանացել են խրախուսական մրցանակի, իսկ Ալբերտ Բայեանը դարձել է մրցոյթի յաղթող: Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարարութեան հրաւերով մարտի 21-26-ը Ալբերտը գտնուում էր Հայաստանում՝ մասնակցելու յաղթողների համար կազմակերպուած հետաքրքիր ու բազմաբովանդակ միջոցառումներին, ինչպէս նաեւ պարգեւների յանձնման արարողութեանը:

Այս տարի ապրիլի 20-ին Երեւանում՝ Գեղագիտութեան ազգային կենտրոնում՝ կը բացուի Աթանեան արուեստ 26- կենտրոնի 96 սաների նկարների ցուցահանդէսը՝ Ես սիրում եմ Հայաստանը՝ խորագրով: Սա Գլենդելի Աթանեան արուեստի կենտրոնի եւ Երեւանի Գեղագիտութեան ազգային կենտրոնի համատեղ նախագիծն է, որին պատրաստուում էին 2010 թ. սեպտեմբերից: Եւ յոյս ցուցահանդէսը կը բացուի ամառը Լոս Անջելեսում: Այս առիթով Աթանեան արուեստի կենտրոնը հրատարակել է գունազարդ լալում, որի մէջ զետեղուած են բոլոր մասնակիցների ստեղծագործությունները: Այս տարի նոյնպէս Աթանեան արուեստի կենտրոնի աշակերտները տարբեր մրցոյթներում արձանագրեցին նոր յաջողութիւններ, արժանացան բարձրագոյն պարգեւների: Դրանց թուում է Ստեֆանի Գրիգորեանի կ'ոմպոզիցիան, որը հարիւրաւոր պատանեկան ստեղծագործություններից ընտրուել էւ տեղադրուել է բազմահազար տպաքանակ ունեցող "Sax Art" կատալոգի շապիկին: Ստեֆանիի Ես սիրում եմ կապիկներիս աշխատանքը նախապէս արժանացել էր "Sacura of America" իրականացնողների մրցոյթի մրցանակին, որից յետոյ "Sax Art"-ը ընտրուել էր այդ գործն իր կատալոգի շապիկին տեղադրելու համար:

Գլենդելի քաղաքապետարանի Արուեստի եւ մշակոյթի բաժնի Մաքուր պահենք Գլենդելը՝ տարեկան մրցոյթի 2011 թ. ֆինալիստներ դարձան կենտրոնի սաներ Աննելայ Քալանթարեանը եւ Տանիայ Ռոստամյան, իսկ Աթանեան արուեստի կենտրոնն արժանացաւ յատուկ մրցանակի:

Փետրուարի 5-ից մարտի 20-ը Աթանեան արուեստի կենտրոնի աշակերտներ Արփի Կիրկորեանի, Ալիսա Մանուկեանի, Լուսին Ենգիբարեանի, Նինել Աբրահամեանի, Անի Կիրկորեանի, Սարահ Ալաջաջեանի եւ Ստեֆանի Գրիգորեանի ստեղծագործությունները ցուցադրուեցին Օկլանդի Մանկական արուեստի թանգարանում ("Museum of Children's Art"): Այս գործերն ընտրուել էին 150 ֆինալիստների մէջ պատանեկան նկարչական մրցոյթին մասնակցած չորս հազարից անելի ստեղծագործություններից Ամերիկայից եւ Կանադայից:

Աթանեան արուեստի կենտրոնը վստահօրէն պահպանում է առաջատարի դերը մանկա-պատանեկան արուեստի ուսուցման, զարգացման եւ պրոպագանդման գործում՝ հետեւողականօրէն եւ նուիրումով կեանքի կոչելով իր առաքելութիւնը:

### Կարինէ Աֆրիկեան Գլենդել



### ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՅԻՒՆՈՒՅԻՆԵՐԻ ՄԵԾԱՐՈՒՄ

2011-04-08

Նոր Զուղայի Բարեկամներ Յանձնախումբը (ՆԶԲ) Գլենդելում ժամանակին կեանքի էր կոչել Նոր Զուղայի Հայոց Դպրոցների Յոբելեաների Ենթայանձնախումբ (ՆԶՀԵԵ) յոբելեանական միասնական հանդիսութեամբ նշելու տեղի հայոց դպրոցների: Կենտրոնական Դպրոցի 130, Սբ. Կատարինեան Դպրոցի 110 եւ Գեորգ Քանանեան Դպրոցի 105 ամեակները: Եւ ահա 2011 թ. մարտի 11ի երեկոյեան, Գլենդելի Սբ. Աստուածածին Եկեղեցու Արմենակ Տեր-Պետրոսեան սրահում, տեղի է ունենում մեծարման երեկոյ, նուիրուած յիշեալ դպրոցներում պաշտօնավարած, այժմ Լոս Անջելեսում բնակուող, ուսուցիչ-ուսիներին: Ներկայ են շուրջ 70 ուսուցիչ-ուսիներ, յաւելած նրանց հիւրերը: Բազմամարդ սրահը զարդարուած է դպրոցների նկարներով ձևաւորուած գեղեցիկ պատատով, օրուայ նշանաբանով՝ Մեր Դպրոցը մի սուրբ տաճար վերտառութեամբ. սեղանները զարդարուած են ծաղիկներով, Սբ. Մեսրոպ Մաշտոցի եւ այլոքների գեղեցկօրէն պատկերապատուած ծաղկամաններում, բոլորը պատրաստուած գեղարուեստական ձևաւորող, նոյն դպրոցների ժամանակի աշակերտ, Վարդգէ Զոհրաբեանի ձեռամբ: Մեղանները ճոխացուած են Նոր Զուղայի ասանդակն քաղցրաւենիքներով, թխուածքներով: Սրահում

տիրում է բարձր տրամադրություն, մտերմիկ մթնոլորտ: Ծննդավայրի յիշողությունն ու կարօտը ծփում է տարածության մեջ, արտացոլում ղեկերին. հնչում է խոսակցություններում:

Աւելի քան 410 տարիների պատմությամբ Նոր Ջուղան բոլորի սրտերում է... Ու փռում է մնում հինաուրց Սպահան քաղաքի հարաւում, Չայանդերոյ Գետի ձախ ափին, ամառների շոգով, մարմանդ ու գով, ծաղկաբոյր գարուններով, գունագարդ շէկիկ աշուններով ու ցրտաշունչ ձմեռներով... Սբ. Ամենափրկչեան Վանքի հովանու տակ, վաղ առաւօտեան աղջամուղջին, և երեկոյեան մթնշաղին, հնչում էին... Դեռևս հնչում են տասներկու եկեղեցիների զանգերը: Թէև վանքի բարձր աշտարակի չորսերեսանի հինաուրց ժամացոյցը իրաքանչիւր ժամի ղոզանջում է տուեալ ժամը, բայց մարդիկ ժամադրուելիս ասում են. Երեկոյեան զանգերին, նոյնիսկ պարսիկներն էլ այդպէս են ժամադրում. հայոց եկեղեցիների զանգերի աւանդոյթն է սովորեցրել Նոր Ջուղայի բնակիչներին:

ՆՋԲՅ նախագահ Պր. Վահագն Աբգարեանը ներածական խօսքով մեկնարկում է երեկոն. ինքն էլ յիշեալ դպրոցների շրջանաւարտ, հակիրճ անդրադառնում է նրանց հիմնադրման պատմականին, նրանց ունեցած դարաւոր դերին սերունդների հայեցի դաստիարակութեան գործում: Հրաւիրում է նոյն դպրոցների այսօրուայ երեջ սերնդից բանաստեղծ Գրիշ Դաւթեանին երկու խօսք ասելու: Գ. Դաւթեանը պատմում է դպրոցական կեանքի ջերմութեան մասին, որ մնում է բոլորի սրտում փաղաքուշ սերտութեամբ. նա պատմում է այն խաղերի մասին, որ պատանեկան առոյգութեամբ խաղում էին դպրոցի բակում... Յիշում է երեսուն երկու խաղատեսակների անուններ, որոնցով զբաղուել ու խանդավառուել են սերունդները: Այն օրերի հեռուստացուցագուրկ, նոյնիսկ ձայնագրագուրկ և ռադիոյագուրկ ժամանակներում... Այս օրերի մակարդակով էլ դատելով, խաղերի բազմազանութիւնը հասարակական և ընկերային զարգացման ինչոր ցուցանշային արժէք ունի, եզրակացնում է նա, կարողում է Մեր դպրոցը խորագրով իր բանաստեղծութիւնը, նուիրած ժամանակի իր ուսուցիչ Վաղարշակ Տէր-Սուքիասեանի յիշատակին:

Երեկոյի հանդիսավարութիւնը ստանձնում է ՆՋԳՅ նախագահ Տլ. Էլիզաբէթ Սուքիասեանը. նա նորջուղայեցի հին ու ճանաչուած ընտանիքի գաւակ է, որ Նոր Ջուղայում է աւարտել մեր դպրոցը՝ աւարտել է Սպահանի Համալսարանի հայերենագիտական բաժինը, տարիներ պաշտօնավարել է որպէս ուսուցիչ, ապա տնօրէն Քանանեան Մանկապարտէզի: Նա ողջունում է հանդիսականներին, ներկայ ուսուցիչ-ուսիներին. ապա բեւ է հրաւիրում երեջ սերնդի տարիների վաստակաւոր ուսուցչուհի Օր. Սիրիկ Բագիլին, վաստակաւոր ուսուցչուհի և տնօրէն Սոնիկ Կիրակոսեանին, վաստակաւոր ուսուցիչ և տնօրէն Պր. Մասիս Տէր-Մարտիրոսեանին, բանաստեղծ և նախկին ուսուցիչ Գրիշ Դաւթեանին: ՆՋԲՅ նախագահը և անդամները Մեր Դպրոցը մի տուրբ տաճար՝ շքանշանով պարգևատրում են նրանց: Ապա վաստակի տարիների հերթականութեամբ բեւ են հրաւիրում բոլոր ուսուցիչ-ուսիները, և պարգևատրում են նոյն շքանշանով. բոլորին յանձնում է շքանշանի հաստատագիրը: Տլ. Արաքս Անթանեսեանը երգերով և դաշնամուրի նուագակցութեամբ Պր. Սիմոն Սիմոնեանի. իսկ Տլ. Ժարլին Թովմասեանը ասումնքով, ճոխացնում են հանդէպը:

Ուսուցիչ-ուսիները հրաւիրում են յուշեր պատմելու. որ ոգևորութեամբ է ընդունում. պատմումները ընկերակցում են ուրախութեան ծիծաղներով ու ծափերով ներկաների կողմից: Հանդիսականները հիւրասիրում են խմիչքներով, համադամ ուտելիքներով: ՆՋԳՅ անդամներն են Էլիզաբէթ Սուքիասեան՝ նախագահ, Լիդա Այդինեան՝ քարտուղար, Գրիշ Դաւթեան, Վահագն Աբգարեան, Սիրիկ Բագիլ, Վարդգէ Զոհրաբեան, Էմմա Սահակեան, Վալերիկ Կարապետեան, Բիթա Մելիքեան, Ռուզան Ալչուջեան, Նազիկ Սիմոնեան, Լիդա Նաչատրեան, Էլիզ Այուազեան, Արլեն Համբարչեան: Աւարտին ՆՋԲՅ անդամ արժանապատիւ Տէր Կովմասա Քի. Թորոսեանը գնահատում է մեծարուածներին, հանդիսութիւնը կազմակերպողներին. մասնաւորաբար շնորհակալութիւն է յայտնում բարերար Տլ. Ալիս Նաւասարգեանին, որ կատարել է 5,000 Դոլլարի նուիրատութիւն, ժամանակին նա էլ ուսանել և աւարտել է Սպահանի Համալսարանի հայերենագիտական բաժինը, ապրելով Նոր Ջուղայում: Յորելեանական հասարակական հանդէպ տեղի կունենայ մօտագայում, երբ կստացուի դպրոցների հիմնադրութեան և գործունէութեան մասին պատրաստուած շարժանկարը Նոր Ջուղայից:

**ՍՈՒՎ ԴԱԻԹԵԱՆ**  
**Գլենդէ, Կալիֆորնիա**



**Կոչ Թրիլիսիայի համայնակիցներին**

2011-04-08

Քսան տարի առաջ՝ 1991 թուականին , Թրիլիսիի ծայրամասերից մեկում , որը ժողովրդի մեջ «աֆրիկալ է կոչուել այն պատճառով, որ քաղաքի կենտրոնից բաւականին հեռու է գտնուում, տեղի մեծաքանակ հայ բնակիչների խնդրանքով եւ մի քանի հայրենաւեր, ազգասէր ու հայասէր անձանց՝ այդ թաղամասում բնակուող (այժմ՝ արդէն վախճանուած) Երջանիկ Ղանդիլեանի, Վրաստանի խորհրդարանի պատգամաւոր, «վրաստանէ թերթի խմբագիր՝ Վան Բայրութեանի, թիւ 131 ռուսական դպրոցի տնօրէն՝ (այժմ՝ արդէն վախճանուած) Գիւրի Մեփիսաշուիլու եւ նոյն դպրոցի առաջին հայ ուսուցչուհու՝ Ռուզաննա Յովակիմեանի յամառ ջանքերով Վրաստանի առաջին նախագահ (այժմ՝ արդէն վախճանուած) Ջուլիադ Գամսախուրդիայի օրօք եւ նրա անմիջական միջամտութեամբ Թրիլիսիի ռուսական թիւ 131 դպրոցին կից 25 աշակերտով

բացուեց հայկական առաջին դասարանը:

Տեղի հայ բնակչութիւնն անչափ ուրախացել էր , որ այսուհետ իրենց գաւակները պիտի կրթութիւն ստանան մայրենի լեզուով՝ հայերէնով, ու տարեցտարի աճում էր մեր հայկական բաժինը՝ հասնելով մօտ 200 աշակերտի: Աշակերտների հետ մեկտեղ՝ աճում էր նաեւ հայկական բաժնում դասաւանդող հայ ուսուցիչների թիւը, որտեղ գրեթէ բոլորն էլ իրենց գործի արհեստավարժ մասնագէտներ էին: Այդ ընթացքում դպրոցը տուել է հայ բաժնի շրջանաւարտների մի քանի սերունդ, որոնցից շատերն իրենց ուսումը շարունակել են Վրաստանի, Հայաստանի կամ Ռուսաստանի բուհերում:

Ուսման առաջադէլ մեր սաներն արժանացել են Վրաստանի այժմեան նախագահի սահմանած պարգեւներին՝ ստացել ոսկէ, արծաթէ մեդալ, համակարգիչ: Մեր դպրոցականներն ու մանկավարժները ակտիւօրէն են մասնակցել գրեթէ բոլոր այն կրթա-մշակութային միջոցառումներին , որոնք անց են կացուել Թրիլիսիում եւ Երեսնում, ինչպէս օրինակ՝ Թրիլիսիի ամենամեայ «գարունը գարնան մեջ» փառատօնը, Երեսնում անցկացուած «համահայկական խաղերէ, «մէկ ազգ, մէկ մշակոյթ», «հայոց լեզուի եւ հայագիտական առարկաների համահայկական օլիմպիադա», «արի տունէ, Երեսնում եւ Էջմիածնում» «սփութքահայ ուսուցիչների վերապատրաստում, Քուլթաի քաղաքում՝ Վրաստանի հայ ուսուցիչների վերապատրաստում, Ծաղկաձորում եւ Ղարաբաղում՝ կրթական եւ լրագրական ոլորտի խորհրդաժողովներ եւ այլն: 2003 թուականից մեր դպրոցում լոյս է տեսնում կրթա-լրատուական «գրուցակից պարբերաթերթը, որի էջերում լուսաբանում են դպրոցի առօրեան, ուսումնական կեանքի բարեփոխումները, ուսուցիչների մտորումներն ու աշակերտների ստեղծագործական առաջին թորովանքը:

2009 թուականի յունիսի 2- ին մեր եւ Երեւանի Ջոն Կիրակոսեանի անուան թիւ 20դպրոցները դարձան բոլոր դպրոցներ:Առաջիկայում նախատեսուած են երկկողմ պայելութիւններ եւ հանդիպումներ:

2010 թուականին Հայաստանի Հանրապետութեան սփիւրքի նախարարութիւնը եւ Համաշխարհային հայկական կոնգրէսը Հայաստան-սփիւրք գործակցութեան զարգացմանը, սփիւրքում հայ ինքնութեան պահպանմանը նպաստելու եւ «լաւագոյն հայկական կրթօջախէ մրցոյթին մասնակցելու համար դպրոցին եւ դպրոցի «գրուցակից թերթին յանձնել է պատուոգրեր, իսկ «հայապահպանութեան գործում նշանակալի ատենի համարժէ թիւ 131 դպրոցը նաեւ արժանացել է ՀՀ Հանրագիտարանի խմբագրութեան կողմից սահմանուած մրցանակի , ստացել Դպրոցական մեծ հանրագիտարանի եռահատորեակ, ինչպէս նաեւ շնորհակալագրեր եւ յուշանուէր:

Այս ամէնի հետ մէկտեղ, ցամով պետք է նշել, որ վերջին տարիներին հետզհետէ մեր աշակերտների թուաքանակը նուազում է՝ մեծ մտահոգութիւն պատճառելով դպրոցի հայ մանկավարժներին, աշակերտներին եւ ծնողներին: Մենք կանգնած ենք եւս մէկ կրթական օջախի փակման վտանգի առջեւ, որը մեզ սպառնում է հենց այն ծնողների ընտրութեան արդիւնքում, ովքեր իրենց երեխաներին ռուսական բաժին են տանում՝ գրկելով մայրենի լեզուով ուսուցումից ու պատճառաբանելով, թէ հայերէն կրթութեամբ իրենց զաւակների ապագան անհեռանկարային է: Կարծում եմ՝ այստեղ հայկական բաժինը չէ, որ հեռանկարից գրկում է երեխային, այլ իւրաքանչիւր երեխայի ընդունակութիւնն ու աշխատասիրութիւնն է կարեւոր գործօնը նման հարցում:

Հայաստանի եւ Վրաստանի կրթութեան նախարարներն էլ վերջերս կայացած հանդիպման ժամանակ երկու երկրների միջեւ համագործակցութեան յուշագիր են ստորագրել, որի համաձայն երկու երկրների բուհերը կը խորացնեն կապերը, կ'իրականացնեն համատեղ նախագծեր: Հայկական դպրոցներում վերականգնուելու է հայոց լեզուի դաստիարակի քանակը, Հայաստանի եւ Վրաստանի քաղաքացի 10 ուսանողների ուսուցումը պետական բուհերում կ'ֆինանսավորեն այդ երկու պետութեան նախարարութիւնները : Դարձեալ ուժի մէջ է Վրաստանում միասնական ազգային քննութիւններին միայն մէկ՝ մայրենի լեզուով ունակութիւնների քննութիւնը յանձնելու ազգային փորձարարականութիւնների ներկայացուցիչների բուհ ընդունուելու այն արտօնութիւնը, որ անցեալ տարուանից նախաձեռնել է Վրաստանի նախագահը: Ուստի տեղին է Վրաստանի ԳԳ փոխնախարար Նոդար Սուրգուլաձէի զարմանքը, թէ այս ամէնից յետոյ ինչու պիտի՝ 100 հազարանոց թրքիստայ քաղաքի բոլոր հայ դպրոցներում աշակերտների թիւը միասին վերցրած՝ հինգ հարիւրից հազար հասնի... Կա յ աւելի մեծ սխալ, քան այն, որ հայ ուսուցիչն իր երեխային տալիս է ռուսական բաժին, իսկ ինքն աշխատաստիարակ պահանջում հայկականում, կամ այն, որ հայազգի ուսուցիչն իր հայազգի աշակերտին ռուսերէն մայրենի է դասաւանդում...

Այդ իսկ պատճառով, կոչ եմ անում մեր հայ ազգին՝ իրենց դպրոցահասակ զաւակներին բերել հայկական դպրոց, որ ուրիշի այգում ծառ տնկելու, նրանց այգու մասին հոգալու փոխարէն թող իրենց այգու մասին հոգան, ո՛չ թէ արմատախիլ անեն այն, ինչ իրենց հասել է նախնիներից ու մեղադրեն ուրիշներին...

**Մանաա Կարապետեան**

**Թրքիստի թիւ 131 դպրոցի հայոց լեզուի ուսուցչուհի, հոգաբարձուների խորհրդի անդամ**



**Յարութ Սասունեան, Ջեմալ փաշայի թոռն ասաց Յեղասպանութիւն, իսկ Մորգենթաուի ծոռը՝ ոչ**

2011-04-06

Այս մասին ատում է «կալիֆորնիայ կ'ուրիերէ թերթի հրատարակիչ եւ խմբագիր հարութ Սասունեանի «Ջեմալ փաշայի թոռն ասաց Յեղասպանութիւն, իսկ Մորգենթաուի ծոռը՝ ոչ» յօդուածում: Նրա խօսքերով, այդ երեկոյ ամենացնցողն այն չէր, թէ ինչ ասաց Ջեմալը, այլ այն, թէ ինչ չասաց միւս բանախօսը՝ դոկտոր Պամելայ Սթայները՝ դեսպան Հենրի Մորգենթաուի ծոռը:

«Milliyet» օրաթերթի սինակագիր Ջեմալն անմիջապէս շահեց թերահաւատ լսարանի վստահութիւնը, ասելով. «Ես եկել եմ այստեղ իմ սիրտն ու միտքը ձեր առջեւ բացելու... Ես գիտեմ ձեր ցարը, Յեղասպանութեան ձեր վիշտը, Մեծ եղեռնի ձեր վիշտը: Անտեսելով Թուրքիայի Քրէական օրէնագրքի 301-րդ յօդուածը, որն արգելում է Հայոց ցեղասպանութիւն եզրն օգտագործել, նա իր ելոյթի ընթացքում մի քանի անգամ խիզախօրէն կրկնեց այդ խօսքերը: Նա միաժամանակ դատապարտեց Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ Թուրքիայի կառավարութեան ժխտողական քաղաքականութիւնը, այն անուանելով

«մեղակցութիւն ոճրագործութեան մէջէ»:

Ջեմալը պատմեց 2008 թուականին Հայոց ցեղասպանութեան յուշահամալիր կատարած իր շատ յուզիչ այցելութեան մասին, որտեղ նա մեխակներ էր դրել իր մտերիմ ընկերոջ՝ լրագրող Հրանտ Դինքի յիշատակին, որին թուրք ծայրահեղականները սպանել էին Ստամբուլում: Երեւան կատարած այցելութեան ժամանակ նա ցնցող մի հանդիպում էր ունեցել Արմէն Գետրգեանի հետ, այն վրիժառուի թոռան, որը 1922 թուականին սպանել էր նրա պապուն՝ Ջեմալ փաշային: Ջեմալը ներկայացրեց Թուրքիայում վերջին երեք տասնամեակների ընթացքում Հայոց ցեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ ձեռք բերուած առաջընթացը,-ասում է յօդուածում: Ինչպէս գրում է Յարութ Սասունեանը, մինչ Ջեմալն իր անկեղծ ելոյթով լաւ տպաւորութիւն թողեց լսարանի վրայ, դոկտոր Սթայները հիասթափեցրեց ներկաներին՝ անդդուելիօրէն եւ միտումնաւոր հրաժարուելով օգտագործել ցեղասպանութիւն բառը: Դրա փոխարէն նա կիրառեց թուրքական ժխտողական տերմինաբանութեանը բնորոշ այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ «ողբերգութիւն», «տառապանք» եւ «1915 թուականի իրադարձութիւններ»: Որպէս Միջհամայնքային վստահութեան կերտման ծրագրի տնօրէն նա խօսեց «հայերի եւ թուրքերի միջեւ վստահութեան կերտման հնարատր քայլերի» մասին: Նա ապշեցրեց լսարանին, խնդրելով որ հայերն ընդունեն, թէ «թուրք ժողովուրդը սարսափելիօրէն տուժել է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ... կարիք ունի եւ արժանի է դրա ճանաչմանը: Զբաւարարուելով այս վրդովեցուցիչ խնդրանքով, նա շարունակեց, յորդորելով հայերին «մտածել թուրքական տառապանքների ճանաչման մասին, նախքան իրենց տառապանքների համար ճանաչում ստանալը»:

«հարց ու պատասխանի ժամանակ, երբ եւ մատնանշեցի այն զաւէտայի հակասութիւնը, երբ Ջեմալ փաշայի թոռը ազատօրէն օգտագործում է Հայոց ցեղասպանութիւն եզրը, մինչդեռ դեսպան Մորգենթաուի ծոռը՝ ոչ, դրան հետեւեց դոկտոր Սթայների ոչ համարժէք պատասխանը: Նա արդարացաւ, ասելով, որ «միջնորդի դեր է կատարում՝ «հաշտեցման» ձգտելով հայերի եւ թուրքերի միջեւ:

«բանավէճի վերջին մասնակիցը՝ պրոֆ. Յովհաննիսեանը Հասան Ջեմալին ասաց, որ հայկական մեծ լսարանը հաւաքուել է նրան լսելու ոչ թէ որպէս թուրք լրագրողի, այլ որպէս Ջեմալ փաշայի թոռան: Նա բացատրեց, որ թուրք ոճրագործների մտայնութեան ըմբռնումը չի կարող որբել կերպ արդարացնել նրանց գործողութիւնները: Նա բոլորին նախազգուշացրեց կանխամտածուած ոչնչացման հետեւանքով հայերի կրած

տառապանքները չհասարակեցին թուրքերի՝ պատերազմից կրած տառապանքների հետ: Նա շեշտեց, որ հայերը ոչ միայն ճանաչում են պահանջում, այլ, որն անելի կարելու է՝ իրենց բռնագրաւուած ունեցուածքի վերականգնումը: Նա կոչ արեց Թուրքիայի կառավարութեանը՝ Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին վերադարձնել Թուրքիայում գտնուող հարիւրաւոր հայկական եկեղեցիները: Վերջում, որպէս դրակա, Սթայնթրին ուղղուած ակնարկ, պրոֆ. Յովհաննիսեանը շեշտեց, որ «հաշտեցումը պահանջում է «զոջում արարքի համար»: Նրա ելոյթն ընդունուեց յոսնկայա ծափահարութիւններով,-գրում է Յարութ Սասունեանը:

«այդ երկու Ձեմալի միակ տիւհա՞ խօսքը՝ Թուրքիայից հայկական հողերը վերադարձնելու պահանջատիրութեան մերժումն էր: Չնայած, զարմանալի չէ լսել մի թուրքի, անկախ այն բանից, թէ որքան հանդուրժող է նա, որը պաշտպանում է իր երկրի ամբողջականութիւնը: Այնուամենայնիւ, նա հաստատեց, որ Թուրքիայի կառավարութիւնը պէտք է ներողութիւն խնդրի հայերից եւ փոխհատուցում վճարի նրանց:

Միւս կողմից, դրակա. Սթայնթրին, որպէս ամերիկացի հրէայի եւ դեսպան Մորգենթաուի անմիջական ժառանգի, չի կարելի արդարացնել ցեղասպանութեան եզրը օգտագործելուց յամառօրէն հրաժարուելու համար, չնայած նրա բարի մտադրութիւններին ինքնախոստովանութեանը: Չի կարելի չէզոք դիրք գրաւել գոհի եւ դահիճի միջեւ: Նա պէտք է ուշադրութիւն դարձնի Հոլոքոստը վերապրած եւ Նոբելեան մրցանակի դափնեկիր Էլի Վիսելի հետեւեալ խմաստուն խօսքերին. «չգործութիւնը օգնում է կեղեքիչներին, բայց ոչ երբեք գոհին»: Եւ ինչպէս կարող է նա հաշտեցնել երկու ժողովուրդների, առանց դահիճից հատուցում պահանջելու այն բանի համար, որ նրա նախապապն անուանել էր «մի ազգի սպանդէ, գրում է Յարութ Սասունեան իր յօդուածում:



**ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՊԱԼԱՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ  
ՆԱԽԱՂԵՊ Է ԹՈՒՐԿԻԱՅԻՆՍՈՒՄ 1915-1923 թթ. ՀԱՅՏԵՐԻ  
ՋԱՆԳՈՒՄՍՈՒՅԻՆ ԿՈՏՈՐԱՍԵՆԸՆԸ ՈՐՊԷՍ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ  
ՈՐԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

2011-04-06

Այս օրը՝ 2011 թուականի ապրիլի 1-ն, ընդմիջու գրանցուած կը մնայ մեր յիշողութիւններում, երկրի պատմութեան մէջ՝ ընդհանրապէս, եւ հայ համայնքի համար՝ մասնաւորապէս, քանզի տեղական ժամանակով ժամը 13:30-ին Կոմոդորոյ Պի Արդարադատութեան Պալատի Քտրիբունալէս՝ Ա՛ դահլիճում դատաւոր Նորբերտոյ Օյարբիդէն հրապարակայնօրէն յայտարարեց իր եզրակացութեան մասին, որին յանգել էր անելի քան մէկ տասնամեակ տեւած դատական մանրակրկիտ, բազմակողմանի հետաքննութիւնից յետոյ:

20-րդ դարի վերջին, իրաւաբան Գրեգորիոյ Հայրապետեանն ու նրա ընտանիքը՝ Արգենտինայի արդարադատութեան առջեւ հայց էին յարուցել ընդդէմ Թուրքիայի կառավարութեան, պահանջելով յայտնել, թէ ինչ է պատահել իրենց նախնիներին, որոնք դարասկզբին բռնի տեղահանուել են իրենց պապեանական հողից, արտորուել ու այլեւս ոչինչ նրանց մասին յայտնի չի:

Ճշմարտութեան իրաւունքի վրայ հիմնուած դատական գործը ստանձնել էր դատաւոր Օյարբիդէն եւ սկսեց հետաքննութիւնը՝ խնդրագրի ներկայացնելով անելի քան 20 պետութիւններին՝ խնդրոյ առարկայ ժամանակահատուածին վերաբերող այն արխիւներն ու փաստաթղթերը ուղարկելու մասին, որ կարող էին նպաստել կատարուածի վերաբերեալ ճշմարտութեան բացայայտմանը:

Եղան պետութիւններ, որ մերժեցին համագործակցել, եղան պետութիւններ, որոնք հայ ժողովրդի ապրածը Ցեղասպանութիւնն որակել չկամենալով, այնուամենայնիւ, բաց արեցին իրենց արխիւները եւ թող տուեցին, որ շատ՝ մինչ այժմ անյայտ փաստաթղթեր, դատական գործի մաս կազմեն՝ դառնալով վերջնական եզրակացութեան հիմնական յենակետերից մէկը:

Արգենտինայում, դատաւորը հնարաւորութիւն է ունեցել լսելու կոտորածներից փրկուած տասնեակից անելի անձանց պատմութիւնները՝ այն տարիներին կրած տառապանքների մասին:

Այսպիսով, արժէ նշել, որ երկրիս հայ համայնքի կարեւորագոյն հաստատութիւնները միացան Լուիզա Հայրապետեան հաստատութեան քայլին՝ մասն դառնալով հայցուող կողմին:

Տարիներ անցան, սակայն հասարակած ապագոյցները դեռ բաւարար չէին, որպէսզի դատաւորը տար իր վերջնական կարծիքը: Փաստաթղթերի առաքման, դրանց թարգմանութիւնների եւ իսկութիւնների հաստատման համար պահանջուող ժամանակը թերեւս ուշացման հիմնական պատճառն էին:

Սակայն վերջապէս հասաւ այդքան սպասուած օրը:

Եւ մեր համայնքը, նախաձեռնութեամբ մի ընտանիքի, որ սերտօրէն կապուած է յանուն արդարութեան ու Մարդու Իրաւունքների լիարժէքութեան, յանուն նոր՝ առանց շահագործողների ու շահագործողների հասարակարգի պայքարին, մասն դարձաւ պատմական մի իրադրութեան, որ մեր վաղեմի պայքարի պատմութեան մէջ կը նշանաւորուի որպէս նախքան-ը եւ յետոյ-ն առանձնացնող կարեւորագոյն կէտ:

Երբ ժամը 13:30-ին դատաւոր Օյարբիդէն մտաւ Արդարադատութեան պալատի Ա՛ սրահը, այն արդէն ամբողջապէս զբաղուած էր Լուզայ Հայրապետեան հաստատութեան անդամներով, տեղիս հայ համայնքի տարբեր կազմակերպութիւնների ներկայացուցիչներով, լրագրողներով ու մեկնաբաններով, օրինապահ տղամարդկանցով ու կանանցով, Մարդու Իրաւունքների պաշտպաններով:

Իշխող լռութիւնն այլ բան չէր, տարիներ շարունակ թաքնուած ցաւի, վշտի ու տառապանքի եւ տասնամեակների անկոտորում պայքարի մի խառնուրդ:

Դատաւորը կարդաց շարադրուածքի էական պարբերութիւնները: Մի քանի անգամ դադարեցրեց ելոյթը՝ յաղթահարելու համար յոյզերը, որ դուրս էին յորդում փաստաթղթում թուարկուած՝ հայ ժողովրդի կրած տառապանքների նկարագրութիւններն ընթերցելիս:

Դատաւորն ակնյայտօրէն յուզուած էր, մէջբերելով Եղեռնը վերապրողներից մէկի խօսքերը, որ այն եղեռնական օրերին ընդամենը 3 տարեկան էր. Այս հայցը որեւէ նիւթական պահանջ չի ներկայացնում, այլ միայն հնարաւորութիւն՝ ասելու մեր պապերին ու ծնողներին, որ 95 տարի յետոյ մենք չենք մոռացել նրանց ու շարունակում ենք պայքարել մինչեւ հասնենք արդարութեան:

Ժամը 14:05-ին դատարար Նորբերտյոյ Օյարբիդին յայտարարեց.

Որոշում եմ.

1. Հիմնուելով ներկայ` հայցուր Գրեգորիոյ Հայրապետեանի յարուցած No 2.610/2001 դատական գործի հետքնութեան արդիւնքների, վերը նշուած պայմանների ու դրանց նպատակների ուսումնասիրութեան վրայ, ՅԱՅՏԱՐԱՐԵԼ, որ Թուրքիայ պետութիւնը 1915 -1923 թթ. Ցեղասպանութեան ՅԱՆՑԱՆՔ է գործել Հայ ժողովրդի դէմ:

Դատարար Օյարբիդին հերթականօրէն ներկայացրեց բանաձեռի մնացած կէտերը, սակայն ներկաները, որոնց աչքերը ցուած էին, չէին կարողանում զսպել իրենց հոգիներից դուրս ժայթթող կրակը:

Պայթեցին բուն ծափահարութիւններն ու դրանց հետեւեցին ներկաների յուզուած գրկխառնութիւնները` Հայրապետեան ընտանիքի, ի դէմս իրաւաբան Գրեգորիոյ Հայրապետեանի, նրա դուստր Բէատրիսի եւ թոռան` Ֆրեդերիկի, եւ հայ համայնքի տարբեր կազմակերպութիւնների ու նրանց լրատուական միջոցների ներկայացուցիչների միջեւ:

Մի Արգենտինայում, որտեղմասնանշուեց, որ անցեալի ողբերգութիւնների հարցի փակման միակ ճանապարհը արդարութեան հաստատումն է, մեղաւորների պատժելը, այս դատավճիռը ոչ այլ ինչ է, եթէ ոչ` մարդու Իրաւունքների բնագաւառում երկրի հեղինակութիւնը բարձրացնող եւս մէկ քայլ:

Եւ մենք, ծագումով հայ արգենտինացիներս, կարողացել ենք աւազի մեր համեստ հատիկն աւելացնել անարդարութեան ու անպատժելիութեան դէմ` մեր ժողովրդի մշտական պայքարին:

**ԱՐԳԵՆՏԻՆԱՅՑ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ**

**Վերատպութիւն**



**ՓՐԿԵԼ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԵԼ՝ ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՄԲ**

2011-04-04

Մելգոնեան կրթական հաստատութեան կենսագրութեան սկիզբը 1921թ. է, երբ Կարապետ Մելգոնեանը կտակ է կազմում եւ իր ունեցուածքը նուիրաբերում Պոլսոյ հայոց պատրիարքին` պայմանով, որ նա այդ գումարով դպրոց կառուցի: 1925 թ. կնքուում է գործարք, որով Պոլսոյ հայոց պատրիարք Զաւէն Եղիայեանը Հրբմ-ին է փոխանցում դպրոցի տնօրինութեան հետ կապուած բոլոր արտօնութիւնները: Համաձայն այդ պայմանագրի` Հրբմ-ի տնօրինութեան տակ են անցնում հաստատութեան շարժական ու անշարժ գոյքը, սակայն պայմանով, որ Հրբմ-ն պարտաւոր է պահպանել հաստատութիւնը:

1926-ին նոյն համաձայնագրում կատարում են լրացումներ, եւ Հրբմ-ն ազատում է բոլոր սահմանափակումներից եւ դառնում Մելգոնեան վարժարանի լիիրաւ սեփականատեր: Հաստատութիւնն իր դռները բացում է 1926-ին ու իր գործունէութիւնը շարունակում է մի քանի տասնամեակ:

2004 թ. մարտի 14-ին ՀԲԸՄ վարչութիւնը միաձայն որոշում է կայացնում փակել հաստատութիւնը: Դպրոցի փակման առնչութեամբ դատավարութիւններ են կայացել

Կիպրոսում եւ Ամն-ում, սակայն երկու պետութիւնների դատարանները հարցը որոշել են յօգուտ Հրբմ-ի: Հետեւաբար իրաւական ճանապարհով անհնար է պայքարել դպրոցի բացման համար:

Կիպրոսի կառավարութիւնը հաստատութեան գոյքի մի մասն արգելադրել է: Դպրոցն ընդգրկուած է պետական յուշարձանների ցանկում: Արգելում է քանդել շէնքը եւ կառավարութեան որոշումը կարող է օգտագործուել միայն որպէս կրթական կամ մշակութային հաստատութիւն: Մարսափելի վիճակում է դպրոցի գրադարանը:

«Մելգոնեան դպրոցի վերածնունդէ նախաձեռնող խումբն աւելի քան մէկ տարի գործունէութիւն է իրականացնում Մելգոնեանի հիմքի վրայ հայկական դպրոց կառուցելու համար:

Նախաձեռնող խմբի անդամներից տէր Մեսրոպ քահանայ Արամեանը փաստում է, որ տեղի են ունեցել բազմաթիւ հանդիպումներ Կիպրոսի կառավարութեան բարձրաստիճան ներկայացուցիչների հետ: Տեղի են ունեցել հանրային լսումներ` կրթութեան ոլորտի մասնագէտների ու գործարարների մասնակցութեամբ: Տէր հօր ներկայացմամբ` բազմիցս դիմել են Հրբմ-ի ղեկավարութեանը, առաջարկութեամբ վարձակալել շինութիւնը եւ ստեղծել 21-րդ դարի չափանիշերին համապատասխանող դպրոց, սակայն Հրբմ-ն որեւէ պատասխան չի տուել:

Արամեանի ներկայացմամբ` եթէ Հրբմ-ն շարունակի լուր քաղաքականութիւն իրականացնել, ապա նախաձեռնող խմբի անդամները կը շարունակեն Կիպրոսում հայկական դպրոց կառուցելուն ուղղուած ջանքերը: Նրանք մտադիր են Նիկոսիայում Մելգոնեանի հիմքի վրայ նոր դպրոց կառուցել: Մշակուել է ծրագիրը, որը, ըստ Գործարարների միութեան նախագահ Արսէն Ղազարեանի, շատ լաւն է եւ աշխատող: «Ներդրումային ծրագիրը բազմաթիւ գործարարների հաւանութեանն արժանացաւ եւ օր առաջ պետք է կեանքի կ'ոյշուի, Մելգոնեան կրթական հաստատութեան «փառաւոր անցեալ, անորոշ ներկալ` խորագրով պատմա-իրաւաբանական ուսումնասիրութեան ներկայացման ժամանակ «ագգե-ի հետ զրոյցում ասաց Արսէն Ղազարեանը: Տէր Մեսրոպ քահանայ Արամեանն էլ փաստեց, որ կայ մարդկանց մի խումբ, որ պատրաստ է ներդրումներ կատարել:

Նա հաւելում է, որ Եւ-ն արեւմտահայերէն անհետացող լեզուների շարքում է դասել եւ անհետացող լեզուները պաշտպանելու քաղաքականութիւն մշակել: Այսօր արեւմտահայերէնի պաշտպանութեան խնդիր կայ, Կիպրոսն էլ, որպէս ԵՄ անդամ պատրաստ է արեւմտահայերէնի պաշտպանութեան ծրագիր իրականացնել:

«Կիպրոսում այսօր չկայ արեւմտահայերէնով ուսուցանող աւագ դպրոց, եւ երկիրը ողջունում է այդ բացը լրացնելու նախաձեռնութիւնները: Հետեւաբար, Մելգոնեան նոր դպրոցը հրաշալի օրինակ կարող է հանդիսանալ:

Իրաւական ճանապարհով հարցի լուծման բանալին անհնար է գտնել, հետեւաբար պետք է որոշման վրայ ազդել հասարակական կարծիքի

օգնությամբ: Արամեանն ասաց, որ նախատեսում են նմանատիպ լուսններ անցկացնել հասարակական տարբեր շերտերի մասնակցությամբ եւ հիմք դնել հայկական դպրոցի մրցունակության համար: Այս տարի լրանում է դպրոցի հիմնադրման 85-ամեայ յոբելեանը: Մեղգոնեանի տարբեր տարիների շրջանաւարտները մայիսին Հայաստանում կը կազմակերպեն տօնական միջոցառում:

#### **ՀՄՄԻՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«Ազգ» օրաթերթ